

5694

Բ. ԱՅՎՐՈՎԸ

ՔԱՐԱՓԻ ԿԱՆԱՀ



3

ՊՐԱԼԵՏԱՐ - ի
ԳՐԱԴԱՐԱՆ

5524

Պրոլետարիական բուլոր յեղիքների, միացեց

08

ՊՐՈԼԵՏԱՐԻ
ԳԵՂԱՊՎԵՍԱԿԱԿԱՆ-ԳԵՂԱՓՎԱԿԱՆ
ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ԲԵՆԻԿ ՍԵՅՐԱՆՅԱՆ

118892

ՔԱՐԱՓԻ ԿԱԽԱՆ



ՀՐԱՅՐԱԿԱԿԱՐԱՆԻ ՊՐՈԼԵՏԱՐԻ ԱՐԵՎԱՏՅԱ ԱՐԵՎԻՐԻ
ԲԻՆԱՆ

1935

Գառա. ինք. Աշ. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Քողակեր Ս. ԴՐԱՅՎԱԹՅԱՆ

Տպ. Շաբաթ Կառավարության Ա. Փ. Ռատանիկյանի անվան
Համար 2725. Դրամից 160.37. Թունակ 2005

ՔԱՐԱՓԻ ԿԱՆԱՅ

Դեռ այժմ ել Սինամ ձորակում բլթող աղբյուրն ավաղի մանրիկ հատիկներ և հանում գետնի տակից . և ողբյուրի շուրջը փարթամությամբ աճող ջրախոտի մեջ արծաթաղոծ տերեներով բարձրանում և զադար : Աղբյուրի փոքրիկ բնակները զարնանը սերակալում են ջրամամաւակ կանաչ շերտով և այդ լճակների մեջ գորտի մանրիկ շերեփուկներն են խայտում ու կետերի պես :

Սովորությունն եր, թե՛ սրտի ցանկություն, վոր Հեջանց Աթին կոլխազի տավարն իրիկնապահին ուրիշը թերելու ժամանակ նստում եր Սինամ ձորակի զըլիսին՝ միշտ նույն տեղն ու հայացքը ձգում Ահլաւ ձորի սերանը : Հեջանց Աթին այնպես եր թվում, թե Դիդոլն ել և նստել այդ նույն տեղը, յերբ հորթարած եր սարում : Նստել ե, նայել ձորին ու կլոր քարեր և զլորել Սինամ ձորակով ցած :

Այնպես դեռ այժմ ել աղբյուրի ջնագը անգտեղ ծնվում և սկանողում, հողը ծածկվում և թափ կառնաջով, վորի մեջ դալար ցողուններ են բարձրանում ձմի չափ կոկոններով : Հետո պատումում են արդ կոկոններն ու արեւածագիկի պես բացվում նարգիզը՝ թե՛ վերը ըրոնդի կտոր, սոյին՝ վոսկե թափիք :

Ո՞վ զիսե Գիղոյն ինչքան և իջել ձորակով ցած՝ կորած հորթերին մաս զալիս : Իջել, հասել և այնտեղ, ուր ձորակի թե՛ք կողմերը ցանցվում են մաշենու գետնատարած ճյուղերով, դարադաթի ու զերամատու գանգուր թփուտներով, դասել և կորուստն իր ու այդ թփուտների մեջ պառկած ծառի խոնավ կեղե-

վի վրայից սունկ և քաղել՝ ստոքափի կոճակների պծո շարփած:

Յերբ ծառակուտուտը կտցահարել և ծառը, մուշափը թռել և Գիղոլի վասնաձայնից, մոշահարը՝ դույնը մաղութի պես ու, վզին սալիտակ պուտեր, յերբ թռել և աղմուկով – Գիղոլը ցնցվել և տեղից, ձեռքի փափախն ընկել և ցած ու սունկը խառնվել և դեղնած խաշամի հետ:

Միշտ այսպես մտածում եր Հեջանց Աթին և զարագաթի զույք հատիկների պես արցունքի կաթիլներ ելին ծորում նրա կապտապուն աչքերից: Հետո ըարձրացնում եր գլուխն ու նայում հանգչող վերջալույսին: Հորիզոնի սպիտակ ամպի կարմրադոծ յեզրը վո՛քան նման եր Գիղոլի արյունոտված վզին: Իսկ դորշ ամպերի հետ տեղտեղ խտոնված կարմիրը, Հեջանց Աթնին այնպես եր թվում, թե Գիղոլի ցեխակուուլ շապկի վրայի յերդ-շերդ մակազած արյունն ե:

— Դոստությունով ղնացել են, դուշմանություն արել, — միշտ կըկնում եր նա, հետո անշարժ բիրերն աննկատ լայնանում ելին և անզուսպ զայրույթով պատում ամբողջ մարմինը:

❖ ❖ ❖

Են տարի դարբունն աննկատ յեկավ, բոխենու դառը նյուղի վրա աննկատ պատռեց կոկսնն ու կանաչ շրջազգեսափի պես բացվեց սաղարթը: Կնասանին մի գիշերվա մեջ սպիտակաթերթ ծաղիկներ հաղափառ, ցողակուուլ աչքերով նայեց շուրջը: Լեռների ստորոտներում մնայից սրբնիթաց սուվակներ հորդեցին, դեռև իր ընթացքով չոփ առավ ուաշ ձիու հանգով ու մարմանդ: Հով բերնց հեռու յեռներից: Զափարների տակ մաղակալեց յեղինջը, կալերում բարձրացավ ալյուկը, ափուեաճն տերեկներով կանաչնց փիփերթը:

Իսկ Հեջանց Աթին ու քաջալ Գիղոլն են տարի իւշի ժամին ել զրույցի բռնվեցին, խոսակցության նյութը պատպից ու կանգ առավ նոր հիմնագրվագ կոլիսողի վրա:

— Տան տեր մարդ ես, Աթիք, — միշտ աշխատեց Հայ ժողովը, Դիլույր, — զու վասդ կուլակ Արելի հնու ես մեկնում: ... Այսր նրա բանը պրծուծ ու ե՞... Դու Են միմիկը ես, նա Են բանջարը, Հասկացա՞ր... առեց ու մասնացույց արեց չափարի տակը:

— Դու մտել ես, Հլա մի՛տ տարի...

— Ապրան մոչ խո մենառում չեմ... Հրես մաշեներն ել մոր եկան, ողբեա՞վ...

— Ի, քաջալ մեսած գյալլա՛^{*)})...

— Չե՛, Հեջանց Աթիք, դու Արելի կուռնի տակին պար արի...

Աթիքն վիրատորմելու դեղքում, ոճից խայթվածի ովհա շատակում եր տեղից, մի պահ անխռո ճաղճարոց-նում աշքերը Ճակատին ցուցամտուի Հօստությամբ մի յերակ եր ուռչում՝ կտրծեն ճիպուի Հարդանծից, ու զողում եր ներքենի շուրջը: Խոկ խոսակցաւքյան ժամունակ նրա ամքրազ մարմինը շարժողության մնջ եր լինաւմ: Դիմացինին թիմում եր, թե նրա ձեռքերն ել են խոսում, վոտքերն ել, քիթն ել, բերանն ել... Խոկ դիմումորը՝ նա այնքան վարպետություն եր մեռց բերել այդ շարժումների մեջ, վար Համախ մինչև խոռնից մարմնի արագ շարժ ու ձեւըսպ գիմացինին Հասկացնաւմ եր ասելիքը: Նա նույնիսկ ուսիսական կիրառական նախադասություններ ուներ: Զկայ-նոնարու դեղքում Հարկ եր Համարում մի յերկու «յորտնի մախորկի» ուղղել Հակառակորդի Հսոցեյին, կոմ զգուքակով եշակը անմահնել նրան: Խոկ յերբ ացք ես չեմ Հանգստացնում նրա բարբարված նղերը, ապա նա ջրոտած ջրաղացի պես իջեցնում եր խոսակցության տռնը և Հարդեմոր չեշտով կրկնում.

— Չե՛ բարամ... Գնա դլուխոդ ծակիլ տու, ծար-բով խելք ածա... Թե չե, վա՛յ քու քուլիաթին...

Բայց այսու Հանգերձ Գիուլի վիրատուանքն այն-

^{*)} Բուշքերն - աչկ պահիր:

քան ուժեղ եր, վոր Աթին հարմաք պատասխան չըդունելով թշնց ու հնուացավ նրանից:

Հեջանց Աթինի ու ջաշալ Գիգոլի այս վեճը պատառական չեր: Ծիչա և, նրանց մանկությունից մասնիմ ընկերներ են յեղեւ, չնմց լեմքի դրկիցներ, բայց առընթեր առաջ, ինչ վոր խոտի պատմությունից ծնունդ եր առել այդ վեճն ու ամերի մնինիի պատմաւմ եր Աթին որպատմ: Այդ պատմաւով ել նրանց շարաթը մեկ անդամ կրաքամ, խղում ելին հարեւանական բայր կապէնը, Հետօ հաշտուում ու նորից դրույտի ելին բռնվաւ Աթինի տան հարթ կառւրին:

Մի ժամանակ Աթինի խոտի զմասալենած հորդվուում եր դյուցի հարսանիքներում, խնառույթներում և իր ուշինակելիի պատմողներն ուներ: Աթին բայց դիմեր, վոր ջաշալ Գիգոլին տանձնին սանգամորաւմով և պատմում այդ առները: Մեկ անդամ նույնիսկ իր ներկայությամբ պատմեց:

— Դու հայր դնա քաջու զիմիդ դեղ որո՞... Զայրացավ Աթին ու մացի մեջ հայշոյելով հնուացավ: Իսկ հնույալ որը յերբ լոեց, վոր Գիգոլի միակ կոմք հորթառաւել և, առանձին բայցականություն դդաց:

Այդ դեմքի տարին Հեջանց Աթին իր խոտարքները Հնձեյուց, խոտը դումահանդ անզամփախելուց հետո, սովորության համաձայն պերանդին ումն տուալ, ըրջեց հանդի ծայրամաները, անտառի մեջ թաղնված բացառները: Քերանց արալ ու տան առաջ մի վորցիկ դեղ կանդնեցրենց մանաւելու հոմաք: Պարևանամուստին ջաշալ Գիգոլին ու մյուս հարեւանները վորոշեցին այդ խոտը դնել, սակայն յերկար սահարկելուց հետ հրաժարվեցին: Աթին ցանկալթյան հոկտոսի դարբանը շտո շտո յեկամ ու նրա խոտը մնաց:

Աթին ամեն առավեա բացում եր գուռն ու ծնուջից սեացաւ դնեն որ-որի փոքրանում եր նրա աշքում: Վոչխարը ծնել եր արդեն ու կամաց արտակ յեր դուրս ըալիս: Պաշուլ Գիգոլին իր յերկու վայսա-

բրն ու կոտը քշում եր նրա կալի մէկով ու զթի տակ ժպառագի, խնդի նայում խոտին։ Մի որ ել հանդից դորիս մանիչակի վունջ կապեց Գիղոլն ու տուն բև քելով դադոնի ցցեց Աթնի գեղի լանջին։ Յերեկոյան գեմ, յերբ մոտ Հարեւնները դարձյալ զրուցում եյին Աթնի տան գրիտին, Գիղոլը, իրը ոլառահմամբ, Հայոցքը դժեզ դեղին ու զարգալ խոսովեցներին։

— Տղերք, Են ի՞նչ ա...

— Պահ... ժպառացին բոլորը։

— Խոտը ծաղկել ա... Մանիչակը դուրս ա եկել...

Եսպես ծիծաղեցին ու անցավ, ինքը՝ Աթնի ել ժպառաց։

Եղ գիշեր մի կատաղած բաւք բարձրացավ, մինչեւ յուրս բավկական ձյուն նոտեց։ Ասավուր գյուղացիներից շատերը դժվարությամբ բացեցին դռներն ու մարտզի վերջին կանոնքը հայտքելով լցրին անտառների տապահի։ Գիղոլն ել քմացն ուսն առած, դիմեց այս ու այն Հարեւննին, բայց մաչինչ չճարից։ Քաղցած կոտը բառաչում եր դոմում, իսկ նոր ծնած վաշխարները մայում եյին բացող յերեխանների նման։ Վերջում հայտքեց զրկիցներին ու Հոնցավորի քայլերով շարժմեց դեպի Աթնի կալը։

Աթնի մաքրում եր տան կոռուրը։ Յերբ նկատեց յեկըսրներին, քթի տակ դառը ժպառաց ու ձեռքի թիւու ամեն մի շարժման հետ ինքնաղուհ կրկնեց։

— Հա՛, խոտը ծաղկել ա... Հա՛, մանիշակը դուրս ա եկել...

— Աթի, — ձայն տվեց Գիղոլը, — մի դեսը կադեմ...

— Ինչա՞ , խոտս ծախում չեմ, — աղաստասիսանեց Աթնի ու դլուխը դարձյալ իշեցնելով, շարքաւնակնեց զործը։

Գյաւղացիները հասկացան նրա միաքը, իրննչ

մոտեցան Աթենին : Նախ աշխատեցին համոզել, թե ի-
զուր և կատաղից այլքան ննդացել, և ապա խնդրե-
ցին ընառատի խոտը :

— Տօ ձանեթ ա, ուղում եք առեք...

— Այ մարդ, երեխա չես ախր...

— Ախր մահար չկա... նոտ...

Գյուղացիներն ստիրված ցրվեցին, իսկ ձյանը
զալիս, հա զալիս եր: Յեփ յեթե ճյան չերար մաս-
նեմատն եր բարձրանում, Աթենի խոտի դինը՝ 5-10
սուրլով: Հարեւաններից մեկը սահմարված քանդեց իր
մարագի դրուին ու ուեցած դարմանը բաժանեցան
արեցին: Աթեն այդ գիշեր մեծ հաճույքով նո-
յեց մինում յերկնեֆին, շարունակվող ճայնը և մի բա-
ժակ սղի կուլ տալով, հանդիսա քնեց: Հետեւալ որը
նա իր խոտի տեղ մոխրի մի կույտ տեսավ: Մըմըր-
թաց, թջունեց, ազմաւէ-ազպազակ բարձրացրեց, հետո
Գիզուից ու մյուս հառեւաններից զանգատ ամեց, բայց
չկարողացավ հաստատել ու դործն այդպես ել մնաց:

Ահա այդ սրիխանից եր ծնունդ տոել յերկու հա-
րեւանների մնաւութեանը:

Են դարեանն ել եսոքես վիճեցին — վիրամայրեցին
իրար, յերկու որ խումբ մնացին, իսկ յերբորդ որն Ա-
թեն կացնե, կամ ուրազէ պատրիտակով հաշտվեց Գի-
զուի հետ: Մեկ անդամ ել դրույցի ժամանակ Գիզուի
մի անդույչ կատակից Աթեն վեր ցատկեց անդից ու
դարձավ նրան.

— Արա, գե արի ու ասիլ մի... Բու համար մին
ա... քսոյ յա բարդա, յԱ բաղդազտաք... Համա իմ
քուլփաթը սարի սավոր ա ն... Յես վոնց կոմերս
տամ կոլխողին ու երեխիս ցամաք ուահեմ...

— Յանի եղ ո՞ւմ զուռնի տակին ևս ծուլ րլում,
հանդիսա տանով հարցրեց Գիզուր:

— Չե՛, յես իմ չորս կոմը բերեմ քի ոկտ լըթիո-
մի զարուն կոմի հետ խառնեմ...

— Հեշտաց Աթեն, չափդ ճանաչի, եղ մին, մինն ել

ա՞ւմ հաշվին ես կովառել դառնել, մեր պնտության, թե՞ քու կույսի Աբելի...

— Իմ ասավակա՞ն ես... Տո քունն ել, Աբելին ել... Այս ասելով Աթին թքեց զեանին ու զուզս յեկայի Գիղոլիի տան շեմքից:

Այդ որդիանից վերջնականապես կտրվեցին նրանց բոլոր հարեանական կապերը:

* * *

Անցան ամիսներ :

Ամիսն առավոտ, յնըր սապառավոր լեռան յնտեկից կրակի շնօջ եր բացմում և ձյան հատիկների պես հորդում եյին աստղերը, կոլխողի կալում դռուում եր տրակառըն ու բանում եր կալսիյը: Ամառվա վերջին սրերն եյին: Հեշանց Աթին վազուց հավաքել եր իր կայ ու կուտը և ցաք ու ցրիսլ կիսաստ-պուատ զործներն Եր կարգադրում: Նա մեկ-մեկ անցնում եր գյուղամեջ ու կանոնական առաջնորդում և առ մեկ-մեկ անցնում եր խուրճերի զեղը, իսկ հանդից բնունամիրդան սայլերը շարունակում եյին խուրճ անզուփոխել:

— Այ թե մատիլ ա, հա՛... Խոսում եր իր մեջ Աթին, հետո վերցնում եր զեանից մի հասկ, ինամքով այսպատմ ափի մեջ, հաշվում հատիկներն ու նորից կալը դժում:

Այդ ժամերին բոլորն ել դրազված եյին լինում և վոչ յոք առանձին ուշադրություն չեր դարձնում նրա մրա: Մինչդեռ Աթին կուղեր, փոր առատ բերքի մասին իրենից կարծիք ուղեն և ինքը զարմանք հայտնել:

Նա մոռենում եր կալսիչին, մանրազննին կերպով գիտում յարմիող մասերն ու զլուխն որորում:

— Հիմ, գլուխը սրա հնարողի զլուխնա ա... Մերը չմեռնի փառ... Վոնց ա ուշարի ուսո լափում...

— Ես են փոխառության հաւաքն և, Աթի քեռի, ևն, վոր տուաջին տարին չպավեցիր... Ժպտում եր

կոճառուութեան Սեղբակն ու խուրձը յեղանե ծայրն առնելով, թափով դժումք կալսիչի դլուխը:

Մեկ որ և կոլխողի նախառահան Վասիլ Աթնի Հետ յերեար զրուցելուց հետո դիմեց նրան:

— Եղ իրան կարդին Աթի... Ախր դու հարադատ մարդ ես, կոլխողի դուռը քեզ համար բաց ե, խեր ըւէ, ի՞նչ ես մասնում... Առ համատարածի դուռնեն չի, հիմի ուրիշ տեսակետով ա... Մի մտիկ արա շորո կողմդ, կոլխողնիկների նոր աները ծլում են սականների պես: Որ-սրի ունեսր կյանց ենց ստեղծում, ունեսր... Գնա, Աթի ջան, կնդանեց ուս մասնութ արա ու հաշիվդ տես...

Աթնի Հետ շատշատերն եյին զրուցել կոլխող ուրիշու մասին, բայց բոլորը քամու պես անցեն, եր նրա ականջի վրայով: Բակ Վասիլի խոսքերը նա հարգեվոր համարեց ու դլուխը կախեց:

Ցիշտն ասած, Աթին վազուց եր համոզվել, ուրի հոյսազն աշխատող մարդի տեղն ե, բայց խռապիում ե անհարմար եր դդում: Մեկ անդում նույնիսկ յանկացավ դիմումի պես մի բան զրել: Յերեխայից պահանջեց թուղթ ու մասիտ, ծուռ ու մուռ տառերով շարեց եցես, Աթի Հեշյանու—ստկայն բռակեական գոյ պատռեց թուղթն ու դուրս դլով խօրը շունչ քաշեց իր կալի ծայրին:

Այս բոլորը մի կողմ, բայց Վասիլի խոսքերն իսկապես լուրջ մատանջության մեջ զրին Աթնին: Հենց այդ եր պատճառը, վոր նա տուն դարպի նստել եր թախորի ծայրին, մատավլ չանդուում եր ծնկի, վրայի մածնի սովորակ լուքին ու մասմում, թե ինչ մեռի Հայտնի կոլխող մանելու մատղբությունն իր կնոջը նուբարին:

— Զե, կերկ, — վերջուպես սկսեց նա, — Ժամանակն անցով... Քաջակ Թիզուի հետ ել խոսել չի լինում... Առաջ, թե տնաղի համար ասում եյի՝ «Ճղերց, թե Դիղութ դլուխը բաց անէ, արեր վախեց մեր կմտնին

շահնքի քաշաւ ես, ևսոք որպանից ել դրէկվեցիւ Կովյառ
զի մտսիլն եթ նրա ջանը ։ Քաղաք դնաց տուի տակ
բնիքով ու ևսոք դլուխը բաց ա ման դալիք։ Սև, խու-
ռան մողերը բարձրացնել են գլխին ու են գեղնած Գի-
զալն արենի այս ժամանամ ու . . . Հրեն իրեն համար ել
նոր տան ա շինուամ . . .

Այս խոսակցաւթյան վրա տան գուռը դուզաց ու
նրա չեա ել Աթինի սրբածները։

— ԲՀԸ, բՀԸ առանն ես . . . լովեց մէի բամբ ճային աւ
չառա քուրցի մեջ թաղիմած Աքելը մտավ ներա։

— Համեցեք, չփախվեց Աթինի, իսկ Նուրարը ՇՀՀ-
իուշորի ծայրը անդեմն շուրբթերի մեջ։

— Որմն քնուամ եք . . .

— Զե, Արել զայ, ինչ քննելու վախան ա, — պա-
տասխանն Աթին ու ծալքի բարձերից մեկը զբեց
թախախն։

— Դեսն անց եյի կենուամ, ասի մէ տեսնեմ ինչ
կտ, ինչ չկա . . . Հեյ դիտի, հարուտացել ես մեր տղա,
լայնդ յես անուամ դոստութին անես . . . Ասենք, դու-
յլի յես մեղամոր, ժամանակը փչացակ . . .

Աքելը 60-ն անց մարդ եր։ Նրա լորձունքոտ շուր-
թերի արանքից յերևուամ եյին անստամ լնդերքը, իսկ
յերը փակուամ եր բերանը, թշերի վրա կարմիր բշտիկ-
ներ եյին ուռչուամ և միրուցի մազերը ցցվաւմ եյին
մացառի պես։ Խանելացավ ուներ Աքելը, ջրաղացի
պես մեկ վոր սկսեց, վերջացակ։ Գոմեշի համբերու-
թյունն եր պետք նրան լսելու համար։ Մեկ անգամ Ա-
թին այնքան ձանձրացավ, վոր Աքելի դեմքի կնճիւննե-
րը, անկանոն փոսերը, դուրս ցցված քիթն ու միրու-
թը նմաննցրեց իրենց հանգամասերին։

Հետո նախատեց իրեն, վոր ալեսորի պատիվը
ժամանակ և տալիս։

— Մեր տղա, ևսոք մի դալիք խարար եմ իմա-
ցել . . . Ասուամ են նալողը չսաշլու համար Բեղլար տղի

տղերանց ունեցած-չունեցածը վերռիր են արել ու ես
երկու որո աճնուրք ա... խոսեց Աբելը:

Ճիշտ ե, Աթին չհասկացավ աճնուրքը, բայց
նմանեցրեց ռուռմացած՝ բառին և լավ բան չպու-
շակեց:

— Այսինքն, Աբել դայ, վո՞նց թե...

— Այսինքն դբանց տունը քանդվի... Խոսք չորս
ողափի միջին մնա, ժամանակը փշացնել ա... Այսինքն
հավաքվել ոլտին, բազար անիլ, մուֆտա ձախիլ ոլր-
աին կովերն ու գոմը, փողը տանիլ, թող տիրոջ մե-
րը լաց րիի... Հակացար, այսինքն տհենց...:

Նա մի պահ լուս մնաց, հետո բարձրացրեց ուն-
քերից մեկն ու դառը ժպաալով շարունակեց.

— Հըմ, բայ նրա տղերանց դլուխը մեռած պտի
ըլիլ, վոր... Աբելը ծամծմեց վերջին խոսքերը:

Այս ամենը սարսափայ լսեց Աթին, զգուխն որո-
րեց, թշուանց կապաափուն շուրջերի վրացի հառա-
շեխերը, վարոնք կարծեն դուրս ելին զալիս նրա հառ-
պաղած քթի ոռւնդերից: Բայց կար մի ավելին մաս-
տանջ ճիճու, վոր նրա միտքը ծծում եր դժմեշի քթա-
ծակը մտած տղրուկի ողես: Աթին չեր ուղում, վոր
Աբելն ոկսի խոսել կալխոզի մասին: Մեկ յօր աղջու-
թելու յեր նրա միտքը, մեկ ել Աթին չեր կարողանա-
յու ակնաղունձ անել Աբելի խոսակցական ջրազո-
ցում: Բայց չեղայ, Աբելը շատ հեռվից սկսեց:

— Սառւմ են քու նախերի հողը կոլխոզի սահմանն
ա ընկնում, դուդ ա՞...

— Ավ զիտի... Զեմլյան դեռ եկել չի...

— Ել ինչ ով զիտե, — ըրթմնջաց Աբելը, կատա-
կածով նայեց Աթինի իջեցրած աչքերին ու շարաւճա-
կեց զրաւյցը, — դուդն ասած, կոլխոզը դեշ բան չի...
համա զե պակասնի զեռ շատ կան... մին ել մի բա-
նից խելքո բան չի կարաւմ... Ախողեր ես ունեցողը
կուլուկ ա, վոտի միբա կանգնողը՝ ուռնացած... Դե-

Նհան կոլիխողն ել թամբալոնոց ա ևլի... Առաջս չորս
օրական միջին մնա, ժամանակը վորխվել ա...

Եսպես յերկար խռուեցին կորիխողից, ճաղոնիայի
կոմից, Հետո Աթին դուրս յեկամվ Արելի Հետ, ուղեկո-
ցեց նրան մինչեւ կալի ծայրը: Լուսինը կարմրած
զուրս յեկամ աարի յետնից, ու Աթին Նուրարին նմա-
նեցրեց տաք թոնից առաջ կանոնած: Հետո սարսուռ
դպաց յուսնի յառաջունած դեմքից ու կոմի ահը ո՛՛՛-
տուժ, տան շնմքից գլխակոր մտավ ներս:

Այդ խոսակցությունից մի շարաթ անց շրջանա-
յին ֆինրամնից մարդիկ յեկան և աճուրդի հանեցին
նեղար ազի ունեցվածքը: Հեշտնց Աթին չուզեց տես-
նել արդ, հարևանի եշը վարձնց ու ջրաղացը զնաց՝
թեև աչյուրի կարփք չուներ: Նա ոչիշերը Նուրարըց
իմացամ, վար գյուղացիներից մի քանիսը դնել են
մտնր անտառուններ, իսկ հայերն ու զամբ կոլիխողն ե
վերցրել:

— Վասիլն Անգի՞ յեթ... անմիջապէս հարց տվեց
Աթին ու սիրութ թողրաց:

— Կոլխոզի կոնոցը. նա ու մնել Քաշալ Գի-
գովն եցին մեյդան եկել...

— Հո՞... անորոշ բացականչեց Աթին և ալյուրը
տեղափակելիս հայհոյեց Բեղլար առի տղաներին, վոր
ուշացրել են որեւության հարկը, իսկ ինըը ծանուցա-
դիրն սահնալուց յերեք որ Հետո վակենց իր հաշխինե-
լը:



Յերբ աշնան սրերն աշնան ծառի տերեների պես
մեկ-մեկ քամու բնըանն եյին անցնում ու դորշանում
է յին Հեռուները—զոմահանողի մասրինաւ և շախի
ըմբերի տակ դեռ բարձրանում եր սիզախտար, կամագույն
թամբերի վրա աճում եր գյողղակը,^{*)} դոմենը նորող-

^{*)} Աշնանը բաւանող խոտ ե:

վում եյին ու ճապավենաձև ծուխ բաց թողնում երենց նեղ յերթիկներից :

Այդ որերին գոմահանդում ամեն գիշեր քուլացնուլա ամպ եր չոքում՝ փափիկությամբ ոքողում եր մասընիներն ու ցախի թվինը: Ու առաջոտյան, յեր ամորը յետ եր քաշվում, ցողի ծանրությունից զլուխն որորում նր ծեղը-դոմահանդի առաջարածը գիտեր, վոր փափիկել են խոտն ու ծեղը, կովը հեշտությամբ դլուխը կիթաղի ցախի թվի աակի, խակ զոմենչը շորացած մասուրը ծամնլիս սպիտակ փրփուր կկաթեցնի բերանից :

Սապատագոր յեռան ճախ ուսին զորչ սունեների խմբի պես ծիաբան դոմահանդում այդ որերին միա այն Հեջանց Աթին եր պրապում որն ի բուն: Ամեն դարձնան նա մեխում եր զոմի գուռը, ցախի խուրճ դնում լիսածակերում: Հարկագոր փայտերն ու կաղնի հաստ տախտակները սայլով տեղափոխում եր դյուզ, հետո զդմի ճակոտից մեխած յեղան դանդը խնամքով թաղում եր վեյնում՝ մի նշանավոր աեղ ու տախտը արոր քշում:

Խոկ մյուս աշնանը զոմը կարգի յեր դցում, ամբաղջ ձմեռը իր չալ շների ու անասունների հետ որեւը մթնեցնում դոմահանդում:

Սապատագոր յեռան ու զյուղի միջև Դավլու ուսուրն եր ու մի քանի յերկ բլուրներ: Դավլու ուսուրի դոմահանդին նայող դոչի մրայով քանի աշուն անցուի – Աթին չգիտեր, միայն հիշում եր, վոր տարիներ առաջ իր զոմի զանից այնունդի քարակույանը, շեկ վլվածքներն ամենի շատ եյին յերեսում ու ուսուրի դլուից իջնում եր Քարափի կածանը: Խակ այժմ ցառի ու մաօրենու թիկերն անարդել անել են այնաեղ, թնձենու և բռնչենու արմատները նույնիսկ ճեղքել են քարերը, բոյ քաշել, հետո մսիրաղույն տերեւելով ծածկել են քարերն ու Քարափի կածանը:

Վերջին տարինները Աթինք մնակ եր լինում դժմահանդում : Նու լով պիտեր, վոր իշ հարևան զոմատերերի մի մասը հնոր լինելու պատճառով քանզին է զոմերն ու մասեցրել գյուղին, իսկ մյուս մասը՝ կայսոյ և դրվել եւ անասունները տեղափարել համայնակունքում :

Բայց այս աշխանը Աթինք մնակ չմնաց : Ծեմ ահա թե ինչպես : Մեկ անդամ նա զոմահանդից դյուռ դնալիս ծուլացավ շրջել Դավիլու սարի սառրստը և վրոշից Քարափի կածանով բարձրանալ վեր : Նուրարն աշարդին եր տղային, վոր զիշերը զամաւմ մնա իսկ Աթինք զլուին ու չորերը լիմանու համար դյուռ դնա : Աւ յերբ աւսերը վայր ու վեր անելով Աթինք իշնում եր գուցրիկ ծորակը, դեռ մեծ ճամրին չհոսած հիշեց Նուրարին, իր փոքրիկ աղջկան ու շուա առւն հանելու համար մնանց Քարափի կածանով բարձրանալ : Այդպես եւ արեց : Կարեց մեծ ճամրին չհոսած գարքարուտ կածանի դիդդագով անցավ ասած : Կածանի շուրջը բուսած դախը եր լինում նրա շալեն շալվարից, ծիատուտած արխարուդի փեշերից, կամ պատում եր շորերը և կամ պակված ու նրա հետ անցնում եր առաջ : Աթինք մտաղրագ եր, ներքաւսա ուրախ ու շատ զանդառ եր բարձրանում վեր : Հանկարծ կածանի մրս ապրած գող ոնձնենու ճյուղը դիստավ նրա ճակատին ու չանգանց : Աթինք սուր ցալ զգաց : Կանդ առաջի, ճնոքով շոշափեց ճակատն ու մտաների վրա արյուն տեսավ : Արխարուդի փեշերով սրբեց ճակարը և զբուշությամբ շարունակեց ճանապարհը : Աթինք նոր դդաց, վոր վոտքի ջերը հողներ են, իսկ կածանի կեռոր նոր և անցնում : Վորոշեց մի փոքր շունչ առնել : Նսանց կածանի մոտ, բռնչենու ասեկ : Հետո մեկնեց վոտքերն ու թիկունջը հենեց ծառին : Նա այնքան եր Հոգնել, վոր կարծես մի հեկտար կարճ դարի հնամակներ :

— Մեր ապրուստն եւ մի սհենց կածան ա ելի —

խոսեց ինքն իրեն, — զիշեր-շերեկ չարչարժում ենք ու ծերը ծերի չի գալի: Վարսում ենք, ցանում, արտը հասցնում ու մին ել, կամ յերաշան ա տանում, կամ կարկուտը... Համա ուրիշա եռյխողը... Մի արտը, վոր կարկուտը աանի, յերկու հանդի մասիլը ցամբ կը ձածկե... Մի խոսքով կոլխողն ել են ներքի դուռ ճամբեն ա... Խոսեց ու շարունակեց ճանապարհը: Դամյու սարի զլիից մեկ մնդամ ել նայեց գոմահանդին: Ուզեց ձեն տալ տղային, վոր շներին լայ նայե, բայց դոմի առաջ մտրդ շնկատելով ծոծրակը քորեց ու ծածկից սորի յետնը, կածանն այդուն իջնում, նորից միանում եր ճանապարհին: Աթին նկատեց, վոր ճանապարհով ինչ վոր մտրդիկ են դալիո շյուդից:

— Ավքեր կիմնեն, — հարց տվեց իրեն և արագացրեց քայլերը: Վերջաղես յերը բաշական մոռեցնել եւ յեկվորներին, նկատեց, վոր կոլխողի տղերքն են:

— Բարի աջողում, խեր ըլի...

— Եեր ա Աթի քեռի... Պատասխանեց նրանցից մեկն ու ժպտալով ամելացրեց, — ուզում ենք հարելուն գոտնանք...

— Վոնց թե... Զարմացավ Աթին...

— Ավ դիտի մեր բանր, — վրա բերեց մեկ ուրիշը, — մոր շինած դոմը հերիք չի անում... Ուզում ենք քու դոմի մտուի նեղյար աղի դոմը նորոգմանք ու սուրբու անասումների մի մտու ես մմեռ ինդի տեղակարբենը...

Այդուն ել յեղախի:

Աթին շատ ուրախացավ, մոր հարեւնն յեկաչ, բայց տիսրեց, յերբ կոլխողի դոմի տաղլարածը Գիզուր դարձավ:

— Մեր իծանր իրար հետ հանգը չեն դնում, — սեց ու վորոյեց ինքնամփոփ ապրել:

Ամին յերեկո Աթին կիթում-եր ցամաքող կավերը, մի թառ կաթը զնում կրակին, հետո դուրս դալով յար

շնորից մեկը կտառում էր դոմի լիսածակի մաս, մյաւ-
սը՝ դուսն, փակաւմ եր գուռն ու կրակի շուրջը թիել-
ների մասնում աշխարհի մասին։ Մտածում եր Աթին-
կայիսպէտ ասսաւ բերքի, Գեղոլիի խռւճում մաղերի,
նոր տան մտան, Հետո մնկ մնկ ել հիշում եր կնաջ
խոսքերը՝ առ մարդ ոլսրժիզ մաիկ արա, վորդի բա-
րակա, Ասդ ընդի կարօիք — և շուռ ու մուռ եր գա-
լիս անելանելի մտածմաւնքներից։

Կրակի մրացի կաթը թափսում ու եր թշոցով
կարում եր նրա մուքի թիելը։

* * *

Ասմար պիշեր եր։

Սև չանդն իր մազելները ողոկեց ոնտնից և ո-
պակ-օպակ պալարմելով սպաց ձարն ի վեր։ Յերկըն-
դում դուռաց ամոր՝ մահարդի որես սուր և նրա ձայ-
նից կարծեն ցնցվեց Աթինի խարիսուլ պոմը։ Զարո-
պանդ ձիավարի յախահ պնս մոլորից կոյժակն ու-
զարնոց վորոտու սպասուի մազելում պորշ գամահանզի
վրա։ Աթինի լիսածակի մոտ կապած չուլ շունը ծմբաց
ահճքեւ խոշոր կաթիլներից և շարժինց տեղում։ Նրա
ժաման կապահ լիսածակի թիթեղին, ու թիթեղը ծր-
որնողայով ընկայ ԲՀար կովի պողին։ Անձքնի կաթիլ-
ները բաց յիսածակից աղմեոյ թափսում եյլն ցած,
իսկ Աթին կծիկ գարճուն ամքել եր բուխտու մոտ։
Նա սւշում եր դուրս գնալ, փակել լիսածակը, բայց
ոիրա չեր անում։ Աղիողորմ ձայնով կազկանձում
Եյին կոյխաղի շները, նրանց ձայնի մեջ սարսափի կար,
ապօս մի բան։

— Գել ա եկել, — մտածեց Աթին։

Բայց վոչ, նա ճանաչում և զիւահաջը։

Աւ վզզում եր քամին... ինչ վոր բառաչ եր յըս-
գում։ Կարծես մի խռմի անառուններ հաստում եյին
դեսնին թափսած արյունն ու բառայմ մայեղին։

Աթին սարսուռ բառաչ Դուքը, Շնա, յերելուլ-
թին, մի բան եր կապարմում։

Աթինի շներն ոլզում ձայնակցրում եյին կոլխազի

շներին, հետո կարծես միանդամից կատաղեցին։ Մառը ելին լինում, ուղում ելին կարել կապերը։

Աթին մի պահ կորցրեց իրեն։ Անիմասա շաբախումներ կատարեց դոմի խափառում։ Հետո թափակեց իրեն, ինչն ել չիմացավ ինչու՝ բացեց դուռն ու նետվեց դուրս։ Անձրեի սառ ու հորդուն կամիլ ներից զգաստացագ, նայեց չարս բալորն ու փշաջաղուցկաց։ Վերելում լույսի մի կարմիր չերա մերք ճեղքաւմ եր խավարը, մերք թաղնվում։ Կարծեն գետնից մի առասպնդական հրնչ իր կարմիր լողուն մեկնում եր վեր՝ վրշապատի խալարը կյանելու հումար։ Աթին հասկացագ բոլորը։ Վառվում եր կոյխուզի վամբը։ Նա շփոթիսած բաց թաղեց եր շները, հովակամուն մի աշարիտ ճիչ արձակելով սլացավ առաջ։ Շները թսղնցին նրան ու աղմուկով իջան ձորը։ Աթին հասայ վասկող դամին։ Մարմնի ամբողջ թսիոյ հըքից դուռը։ Դուռը կրնկահար յնդագ։ Նա բռնց մգածելու թաղյեց դոմի ծխի և խավարի մեջ։ Վառվում եր պոմի առաստացն, ու կոյծերը թափնում ելին ցած։ Աթին կույրի նման խարխափնուով ձեռքերը քսում եր դեսնին, պատերին։ Ծուխն առեզի ոնս ծակում նր նրա թոքերը, իսկ կոկորդը սկսում եր ուղմայել։ Նա ընկայ ցած։ Ջախ ձեռքը կորու ինչ մոր շորի։ Շորի ուղղությամբ տարածեց ձեռքնը ու Գիշուղին համարյա քարչ տալով հանեց դոմից։ Իսկ ու նասուններն ուսոն ոդի ազգեցության տակ խոռնեցին իրար և միմիանց հրելով դիմեցին դուրս։

Անձրեր շտրունակում եր ըալ խլացուցիչ աշխակամ։ Աթին հազիվ եր քարշ առուխու Գիղուլի անշընքոցած մարմինն ու նրա անցած ճանապարհավ իւնելոյին առվի ոյես ջուրը հորդում եր ցած։ Թաց շորերը լուրենու հարթ կեզեկ օկես կոպել ելին մարմնին, իսկ տեղող անձրելը քամու վայրագ պառայտներից խուրծ խուրծ աղտակում եր նրա անպաշտպան դեմքին։ Աթին մի կերպ ներս մտայ իր դոմն ու Գիղուլին ցած

որեց բուխարու առաջ։ Հետո հայվաքեց դռան մոռ
թափախուց շտիր, լարեց բուխարին։ Յախը բուղեյաբսր
նարձատնց ու նրա բացի մեջ Աթին Գիզոլի արնակո-
լու շաղինիր տեսամ։ Այդ ամեննոր յերազ թիացին նը-
րան։ Վաղնաշարը կարծես թուլացամ, աչքնիր մթնա-
ցին դրսի խամարի պես։ Զզաց, վոր ընկնում և, ձեռ-
քըն ուղեց Հենել բուխարու ովկաքարին, բայց շմաբ-
ից ու թաղեց կրակի մեջ։ Յախ զզաց, Աչքնրը
զգասաւացան։ Այս, իր դոմն և, Դիզոլը, իսկ Դիզոլը
միոն ու շաղինիր վողողված ևն արյան մեջ։ Աթին
մերժուց կացինն ու զիմեց դուրս։

Անձմեմ զաղարում եր աննկատ։ Հետդհեմն զոր-
շանում եր խամարին ու նշանարժում եյին շետնին լճա-
ցած ջրերը։ Իսկ չնեցի ծայնի հեռվից եր զալիս,
հեռվի խամարի մուտք ծալքերից։ Ծնյ կարծես չնե
Հաջում, այլ...

Աթին ի՞նչ խմանար, զզում ևն իրար թե՞...
Ամոր զուաց վերջին անուամ։ Աթին չների ձայնի
ուղղությամբ նետախոց տասաջ։ Վաղում եր Աթին, ո՞ւր,
ինքն ել չպիսեր, միայն զզում եր, վոր որեաք և վա-
զի, զառաւմ եր Աթին ահանելի ծայնով, ու չալ չները
կատաղում եյին նրան ծայնից։

Կանդ տասայ Աթին մի պահ։ և նկատեց, վոր շնդ-
վիլ և չների ծայնի ուղղությունից։ Փոխեց Հանա-
պարհն ու նույն թափում շտաղեց տասաջ։ Ծները նրան
նկատելով՝ թողեցին ինչ վոր ուն բան և թուան տ-
սած։ Աթին մոռեցամ նրան։ Մարդ ե՞ր այդ, քար,
թե՞ Հողաթումը։ Կծիկ զարձած ինչ վոր ուն զունդ
թաղվին եր ցեխի մեջ։ Աթին վուաբայ հրեց և նոր նը-
կատեց ծվեն-ծվեն գարձած շորը։ Ո՞ւմն եր այդ, նա
իհարկէ չիմացամ, միայն զզաց, վոր տաշին վազող
յալ յունը թուել և մեջքին, սուր ատամները թաղել
յորի եղ, արոկել տիրոջը, հատ հասել և մյուս շու-
նը, գզել են չարը, իսկ անը թաղվին և խամարում։
Ռեքախացամ Աթին, բողեաբար մոռացամ ամեն ինչ։

Կարծես ցեխակոյոլ չորերը լեզու պիտ առնելին ու
մանրամասն պատմելին այն, ինչ մուլթն եր, մուլ
դիշերի շար գավաղըություն:



Լուսացայ:

Ամպի քուլաները վոչխարի կտրկան հոսքի պես
կծկվեցին ձորերի յերախներում: Հատ ու կննու ծոս-
ոերի տակ խումբ-խումբ հավաքված անառուները
դիխիկոր, ականջները կախած, կիսախուրի աշքերով
մնացել ելին անշարժ: Յեանի փաների վրա ճկուել,
մողնու նման փշտքաղվել ու պոչները սեղմել ելին
վոռների արանքում: Կոլխողի դոմի տնզ մի հողա-
ծածկ փսո եր առաջացել, վորի ճեղքերից ծուլարնն
ծուխ եր բարձրանում: Սարսահած չներից մեկը վա-
խնել եր դյուսդ, իսկ մյուսը հեռացել եր դոմից ու բրւ-
րի վրա կաղկանձում եր: Միայն Աթինի չալ չներն
ելին յերկայն մեկնմել դոմի փակ զառն ասաջ ու ոն-
հանդիսաւ հայացքայ հոկում ելին շուրջը: Նրանցից
մեկը յերբեմն ցաւկաւմ եր տեղից, մոտենում դաս-
նը, նստում պոչի վրա, անհանդիսաւ ճանկուում
դուռը, հրում, ծմբում, սակայն դուռը դաշճալ
մնում եր փակ:



Գյուղից դոմահանդ ձգվող ճանապարհի ախզմը
թռչում եր ոլացող ձիերի վասների հետ, վորոնց ու-
ռաջից աել ի հետ մաղում եր մի շուն:

Ձիերի բաշից կապած մարդիկ ու վաղող շամբ հեռ-
մից դիտողին սև դիծ կթվային, կամ նազառառակի
յետեկից սյացող ուրու: Ձիշերիյա սելավից կուտահ-
ված տիղմի մեջ զույգ ակոսների պես դժվառմ ելին
նրանց հետքերը: Գոմահանդն յերեալու համար մնում
եր մի կանաճն բլուր: Շումը յետ եր մնում, սակայն
աշխատում եր չթուլացնել իր վազքի թափը: Նրանց
հասան բլրի ուր և հաղիկ քաշեցին ձիերի սանձե-
րը: Ձիերն անհանդիսաւ սղույաներ արին իրենց տե-

զերում, իսկ ձիավորների հայացքները մեխոլած մէացին գիմացի սարի ձախ ուսին, վորի վրա մի անսուժոր փռու եր առաջացնէ:

Նրանք շփոթված մի քանի խոսք փոխանակեցին ու ձիավորներից մեկը անցավ առաջ, իսկ մյուսը՝ նույն ճանապարհով շտապեց դյուզ:

Մի քանի ժամ հետո գոմահանդում անառելի երարանցում եր տիրում: Մարդիկ չեյին խոսում, խոռնված եյին իբրար, Հայագիտում խումբ-խռումբ ու նորից ցրիւմ: Բարորի աչքերի մեջ մի անխռոս ցառում եր փայլում: Կոտարել եյին Աթինի զոմի դուռն ու սառակ մի դարհուրելի պատկերի առջեւ: Աթին մեջքը հենել եր պատին, գլուխը թուլացած իջնցրել կրծքին ու համարյա անշնչացնել: Իսկ նրա ծնկան վրա՝ յերեկու ափերի մեջ սառեւ եր Գիբուլի այլանդակված դիմքը: Արյունը լերդ-լերդ մակաղել եր նրա շորերի վրա, շատ տեղ խառնվել ցեխին: Յերկուսն ել կարծես լող եյին տվել ցեխի մեջ:

— Ա. խալխուրաբձր ճշաց Արելը... ինչ եք մալորմել, ինչ եք շմարել. սել ըերեք... ուեւ բան կլի... .

Կոլիխողնիկներից մի քանիսր ձիավորմած դիմեցին դյուզ:



Յերկու որ անբնդհաս Աթին կծկվում եր վերմանիկ տակ, անհանդիստ շուռ դալիս մի կողքից մյուսը, կոճտացնում ատամները, այրող ջերմության մեջ անորոշ բացականչություններ անում: Յերբեմն ջղաձնորեն վերմանը շպրտում եք վրայից, ձեռքերը տարածում՝ կարծես ուզում եր վեր բարձրանալ: Նույրաբն այդ բռպեներին շունչը պահած, լացակամած սպասում եր ահավոր բանի, և Աթին շուտ եր զալիս մյուս կողքին:

Յերբորդ որը միայն Աթին հանդիստ քնեց և յերբ

բացեց աչքերը, սարստիով նայեց շորս բոլորն ու կնոջից պահանջեց ցեխակոլու լորերը։ Նուբարը մի պահ հանկարծակիի յեկազ, հետո հարեւանի տղայի միջոցավ կանչեց Վասիլին։ Վասիլը յերկար չմնաց Աթոնի մոտ։ Շորերի մասին կցկառւը տեղնկություններ ստանալով վերցրեց կոլխողնիկներից մեկին ու միավորված շտապեցին գոմահանդ։

Վեհ վոք չեր նկատել, Աթոնի գոմի բուխարեկի մոտ դրված ցեխակոլու շորը։ Վասիլն անմիջապես վրա թռազ, վերցրեց այն, մի քանի անգամ շուռ ու մուռ տվեց, աղապեց վրայի ցեխը և նոր տեսավ, վոր այդ այլանդակ զանգվածը մի ծյեն-ծվիճն դարձած պինջակ է։ Նա շապակեց գրավանները գտնել, Յերկար փնտուելուց հետո, Վասիլը նկատեց, վոր գրտաններից մեկի բնրանը փակվել և չորացած ցեխի տակ։ Մաքրեց ցեխին ու մեռքը դրավանը տանելով, հանեց այստեղից անձրեսի ջրից մաշված, բաց մանիչակաղույն թանաքով ծածկված մի թղթի կտոր։ Խնամքով բացեց թուղթն ու ամբողջ մի յերեսից հազիվ նշմարեց չորս բառ՝ «գիմում», «կոմիք», «պոմ» և «սուլյուս»։

Վասիլը մի պահ քարացած մնաց։ Հետո թղթի կտորը ջղածորեն ջարդեց ափի մեջ ու դայրույթով կրկնեց։

— Նրանք են...

Ուրիշ ոմքեր կարող են լինել, յեթև վոչ Բեղլար աղի աղաները, վորոնց կովերն ու գոմը աճուրդի ժամանակ ինչն ու Գիղոլն եյին վերցրել կոլխողի համար։

★ ★ *

Անցան որեր։ Մի առավոտ, յերբ կռվառովի ուրախաները վարում ենին դորվաճեն հովիտն ու Հեղանց Աթոն համայնական դաշտում շաղ եր տալիս աշնանացանի վասկեհաս սերմը, միլտեսի և հ միլիցիայի ողակում Բեղլար աղի տղաները, դնաւմ եյին շրջան։

Նրանց գնալուց մի քանի որ հետո կուլտի Արելն ել ձերբակալիկ :

* * *

Սօվորություն եր, թէ՝ սրաի ցանկություն, զոր Հեջանց Աթին իրենապահին կոլխողի առավարն ուրթը մերելու ժամանակ նստում եր Աննամ ճորակի գլխին միշտ նույն տեղը, ու հայացքը դշում Ահլու ճորի բերանը : Հեջանց Աթինին այնպես եր թվում, թէ Գիղոլն ել և նստել այդ նույն տեղը, յերբ հորթարած եր սարերում : Նստել ե, նայել ձորին ու կլոր քարեր և պլորել Աթինամ ճորակով ցած :

Մտածում եր Աթին ու դալուկ մտապատկերները հաջորդում ելին իրար : Մերթ նրա աշքերի առաջ բացվում եր շրջանային ժողովատարանի դահլիճը, լին լիցուն մտասայով ու մեղադրական աթոռի վրա հերթով ջարվում եյին Բեդլար աղի տղաներն ու Արելը : Մերթ հորիզոնի ամպերի վրա դեմում եր Գիղոլիկ ցեխակուոյ չապիկը՝ լերդ-լերդ մակաղած արյունով, ու զնո Աթինի տկանիցին լսմում եր Բեդլար աղի տղայի իրապատ ձայնը .

— Հա... մենք... շաշութին եր ելի... Արել դային մեղ ճամբից հանեց... մութն ընկնում եր, հառանք դոմեները... Գիղոլին դուրս կանչեցինք... առինքին հետ հանդիցն ենք գալիս... մի քիչ մնանք դոմում, մինչեւ անձրեր վոտն ըլի... երավ ելի...

Այսպես հիշում եր Հեջանց Աթին ու անզուսպ դայրութով լցվում եր սիրտը :



ԳԱԱ Հիմնարար Գիտ. գրադ.



FL0045588

(104)

95
А¹
8892

ԳԻՒԾ
50
ԿՈՊ.



Б. СЕЙРАНЯН
ТРОПА ПО СКАДЕ

На армянском языке

изд. ГАЗ. „ПРОЛЕТАР.“